ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ըստ ոլորտի)

բակալավրի կրթական ծրագիր

ՀՊՄՀ-ի Տնտեսագիտություն և կառավարում համահամալսարանական ամբիոնի համակարգմամբ *Կառավարում (ըստ ոլորտի)* բակալավրի կրթական ծրագիրը *պահանջված է և արդիական:*

Կրթական ծրագրի նպատակն է պատրաստել կառավարման ոլորտի համար տեսական գիտելիքներով ու գործնական հմտություններով օժտված մասնագետներ:

Ամբիոնը կրթական ծրագրի շրջանակում պատրաստում է մշակույթի ոլորտի մենեջերներ, մշակույթի ոլորտին քաջատեղյակ, բազմակողմանի զարգացած արհեստավարժ մասնագետներ, որոնք միաժամանակ տիրապետում են տնտեսագետի եւ գործարարի որակների, ձեռներեցության, տնտեսական եւ ֆինանսական գործունեության կազմակերպման հմտությունների, ունեն մարքեթինգի, PR մենեջերների գործնական կարողություններ:

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել որպես կազմակերպության ղեկավար, մենեջեր, կազմակերպիչ, ադմինիստրատոր, մշակույթի ոլորտը կարգավորող կառույցներում (նախարարություններ, հիմնադրամներ, մշակութային միություններ), հեռուստաընկերություններում և մշակութային կազմակերպություններում (թատրոններ, թանգարաններ, համերգասրահներ), հանդիսությունների ու միջոցառումների կենտրոններում, գովազդային գործակալություններում, զբոսաշրջային կազմակերպություններում:

Ուսման վարձ
041301.01.6 - Կառավարում (ըստ ոլորտի) առկա ուսուցմամբ. վարձավճարը՝ 520 000 ՀՀ դրամ :
041301.01.6 - Կառավարում (ըստ ոլորտի) հեռակա ուսուցմամբ. վարձավճարը՝ 440 000 ՀՀ դրամ :

Ուսման վարձի մասնակի փոխհատուցման կանոնակարգին ծանոթանալ հղումից՝ https://aspu.am/website/images/files/Zexch%20kanonakarg.pdf

Ընդունելության քննություն
Ընդունելության կարգին www.aspu.am կայքում, ԴԻՄՈՐԴ բաժնում. լրացուցիչ տեղեկատվության համար գրել հետևյալ էլ. հասցեով՝ ecoteach09@aspu.am կամ զանգահարել՝ +374 (010)-59-70-39: